ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատվել է

ԵՊԲՀ Հոգաբարձուների խորհրդի

____.____.2025 թվականի թիվ ____ որոշմամբ

Հոգաբարձուների խորհրդի

Նախագահ Մ.Ադամյան _____

2026-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևան 2025

ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1. Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամը (այսուհետև Համալսարան) կրթական և գիտական ուղղվածության բարձրագույն բժշկական ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունն առողջապահության ոլորտի որակյալ, նորարար մտածողությամբ և միջազգային չափորոշիչներին համապատասխան կադրերի պատրաստումն է՝ ի նպաստ բժշկական գիտության զարգացմանը, հանրության առողջության պահպանմանը, ամրապնդմանը և բարելավմանը՝ կրթության, հետազոտության և կլինիկական պրակտիկայի ինտեգրման ճանապարհով:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

2. Համալսարանը ձգտում է դառնալ կրթության, գիտության և առողջապահության ոլորտներում միջազգային ճանաչում վայելող տարածաշրջանային առաջատար բուհ՝ միջազգային համագործակցության լայն ցանցով, արդիական կրթական ծրագրերով, մրցունակ գիտահետազոտական ներուժով և ինտեգրված համալսարանական կլինիկաներով: Համալսարանը, ելնելով բժշկական կրթության և առողջապահական համակարգի առջև ծառացած գլոբալ փոփոխություններից, առողջապահական համակարգերի ֆինանսավորման և արդյունավետության մարտահրավերներից և որակյալ կադրերի պատրաստման անհրաժեշտությունից և միջազգային մրցակցությունից, իր գործունեությամբ ձգտում է իրականացնել համակարգային մոտեցում, ներդնել նորարարություններ և մշակել երկարաժամկետ ռազմավարության մեծ փաթեթ՝ հետևյալ խնդիրների լուծումներով.

1) ապահովել կրթական այնպիսի միջավայր, որտեղ, ՀՀ կրթության որակավորումների ազգային և մասնագիտական շրջանակների պահանջներից ու եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներից ելնելով հնարավոր կլինի կազմակերպել որակյալ բժշկական բարձրագույն և հետավարտական կրթություն.

2) ապահովել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրացիների համար սովորելու մատչելի պայմաններ և իրավունքների պաշտպանված միջավայր.

3) կատարելագործել ուսուցման մեթոդաբանությունը և բարելավել ուսումնագիտական ու ուսումնաարտադրական համալիրների գործունեությունը.

4) իրագործել կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական համակարգի և կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման, շարունակական մշտադիտարկման, նրանց վերանայման ու լրամշակման հստակ ձևակերպված ծրագրեր.

5) ապահովել գիտության առաջընթացին, հասարակական և տնտեսական փոփոխություններին ու աշխատաշուկայի պահանջարկին արագ, համարժեք արձագանքման գործընթաց.

6) ապահովել կրթական և հետազոտական գործընթացներին ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրում.

7) բոլոր աշխատողների համար ապահովել ֆինանսական կայունություն և սոցիալական երաշխիքներ.

8) առաջնորդվել ռազմավարական նշանակություն ունեցող համընդհանուր հեռանկարով՝ ուղենիշ ունենալով գիտակրթական համակարգի միջազգայնացումն ու եվրոպական չափորոշիչներին ինտեգրումը.

9) ապահովել ուսանողների մարդասիրական, բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը.

10) իրականացնել հետավարտական և լրացուցիչ կրթական ծառայություններ.

11) մասնագիտական խորհրդատվություններ տրամադրել շահառուներին.

12) ապահովել բուհի հաշվետվողականությունը, գործընթացների թափանցիկությունը և տեղեկատվության մատչելիությունը բոլոր շահակիցների համար:

3. Համալսարանը պարտավորվում է՝

1) հավատարիմ մնալ իր ավանդույթներին, ապահովել բժշկագիտության մեջ ձեռք բերած մնայուն արժեքների շարունակականությունը, ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ նոր գաղափարներն ու ձեռքբերումները՝ կնպաստեն Համալսարանի կայունության պահպանմանն ու ամրապնդմանը.

2) ապահովել ուսանողի մասնագիտական առաջընթացը՝ այն դիտարկելով որպես Համալսարանի հաջողություն.

3) ձևավորել այնպիսի մթնոլորտ, որն ակադեմիական փոխհարաբերություններում կնպաստի անհատի բարոյական ու էթիկական չափանիշների պահպանմանն ու զարգացմանը.

4) աջակցել ուսանողներին՝ գիտակցելու բարոյական վարքագծի կարևորությունը իրենց մասնագիտական հետագա գործունեության, կարիերայի և ողջ կյանքի ընթացքում.

5) մշակել բժշկագիտական կրթական ինքնուրույն քաղաքականություն՝ ազգային առանձնահատկությունների և միջազգային չափորոշիչների հաշվառմամբ՝ ապահովելով շարունակական բարեփոխումներ:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

4.Համալսարանի կողմից որդեգրած արժեքներն են՝

1) որակյալ և մատչելի կրթությունը.
2) որակյալ ակադեմիական և գիտական կազմը.
3) ուսանողի առաջընթացը.
4) ակադեմիական ազնվությունը և ազատությունները, բարեվարքությունը.
5) ակադեմիական միջավայրը.
6) պատասխանատվությունը:

5. Սույն ռազմավարական ծրագիրը Համալսարանի տեսլականն է: Այն երկարաժամկետ (5 տարի) ժամանակահատվածում Համալսարանի առաքելության և հիմնական նպատակների իրականացման գործընթացի նկարագիրն է, որի հիմքում ընկած է Համալսարանի նախորդ 5 տարիների գործունեության հաշվառմամբ իրականացրած ենթակառուցվածքային և կրթական ծրագրերի ինքնավերլուծությունների տրամաբանությունը:

6. Ռազմավարական ծրագիրը ենթարկվում է մշտադիտարկման և կարող է կրել որոշակի փոփոխություններ՝ նոր իրավիճակին համապատասխան:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

7. Համալսարանն իր գոյության 105 տարիների ընթացքում Հայաստանում և տարածաշրջանում ունեցել է կարևոր դերակատարություն:

8. 1919 թվականին մի շարք անվանի բժիշկների կողմից կազմակերպված բժշկական դպրոցի հենքի վրա Հայաստանի կառավարության որոշմամբ, 1920 թվականին ստեղծվել է հանրապետության առաջին բարձրագույն բժշկական կրթօջախը՝ «Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը»:

9. 1930 թվականին «Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը» վերակազմավորվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի, 1995 թվականին ինստիտուտին շնորհվել է Համալսարանի կարգավիճակ, իսկ 2014 թվականին պետական ոչ առևտրային կազմակերպությունից վերակազմակերպվել է հիմնադրամի:

10. 1989 թվականից Համալսարանը կրում է միջնադարի հայ մեծ բժշկապետ «Մխիթար Հերացու» անունը:

11. Համալսարանն իր գոյության 105 տարիների ընթացքում տվել է ավելի քան 50.000 շրջանավարտ, որոնցից 5500-ը՝ օտարերկրյա պետությունների քաղաքացիներ են: Շրջանավարտներից շատերը դարձել են անվանի գիտնականներ, առողջապահության հմուտ կազմակերպիչներ, պետական, հասարակական և մշակութային գործիչներ՝ իրենց ծանրակշիռ ավանդը ներդնելով հանրապետությունում առողջապահության կազմակերպման, հիվանդությունների կանխարգելման և բուժական հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև՝ բժշկագիտության զարգացման բնագավառներում: Ակնառու են նաև Համալսարանի գիտնականների նվաճումները տեսական և գործնական բժշկության ասպարեզներում:

12. Համալսարանը, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, միջնադարյան հայ բժշկական դպրոցների ավանդույթներին ու գաղափարներին, այսօր առաջնորդվում է ՀՀ բարձրագույն կրթական համակարգի պահանջներով և, ապահովելով որակավորումների ու եվրոպական տարածքում մասնագիտացումների համընդհանուր համեմատելի աստիճաններ, ինչպես նաև դասախոսների և հետազոտողների համար ստեղծելով

տեղաշարժման պայմաններ, քայլ առ քայլ ինտեգրվում է եվրոպական գիտակրթական տարածքին:

13. Համալսարանում գործում են ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, դեղագիտական, ռազմաբժշկական, հանրային առողջության ֆակուլտետները և հետավարտական և շարունակական կրթության կենտրոնը՝ իր 78 ամբիոններով, կրթագիտական սիմուլյացիոն կենտրոններով, ինչպես նաև Հերացի ավագ դպրոցը, քոլեջը և մինչբուհական նախապատրաստական ուսուցման բաժինը:

14. Որակի մշակույթի զարգացման մեխանիզմների ներդրման միջոցով Համալսարանը որդեգրել է որակի շարունակական բարելավման ռազմավարություն:

15. Համալսարանի կրթական համակարգը եռաստիճան է՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով՝ բակալավրի և մագիստրատուրայի անընդհատ և ինտեգրացված ծրագրով, «Ֆարմացիա» մասնագիտությամբ՝ բակալավրի և մագիստրատուրայի, «Հանրային առողջապահության» մագիստրատուրայի ու երրորդ աստիճանի հետազոտողի կրթական ծրագրերով:

16. Համալսարանն իրականացնում է նաև հետավարտական, շարունակական լրացուցիչ կրթական ծրագրեր:

17. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ ֆակուլտետները, ամբիոնները, գիտական կենտրոնները, հիվանդանոցային կլինիկական համալիրները, քոլեջը, գիտական գրադարանը, ուսանողական հանրակացարանները, հրատարակչությունը, ուսումնաարտադրական բազաները և այլն: Համալսարանում գործում են նաև մի շարք ծառայություններ՝ համակարգչային կենտրոններ, մշակութային և սպորտային ակումբներ, սննդի և հանգստի կազմակերպման, ինչպես նաև ուսումնամարզաառողջարարական կենտրոններ:

18. Համալսարանի կառավարման մարմիններն են Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը, գործադիր մարմինը՝ ռեկտորը, ակադեմիական խորհուրդը: Համալսարանում գործում են նաև այլ մարմիններ՝ ռեկտորատը, ուսումնամեթոդական խորհուրդը, ֆակուլտետների խորհուրդները, ընտրական մարմինը:

19. Ուսանողների ինքնակառավարման մարմինը ուսանողական խորհրդարանն է:

20. Համալսարանը՝ միջազգային կապերի ամրապնդման և ընդլայնման բնագավառում համագործակցում է Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իրանի, Գերմանիայի, Վրաստանի, Հնդկաստանի և այլ պետությունների բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և այլ մարմինների հետ:

21. Համալսարանն անդամակցում է «Համալսարանների միջազգային ասոցացիա», «Բժշկական կրթության միջազգային ֆեդերացիա», «Ամերիկյան միջազգային առողջապահության ալյանս», «Դեղագետ ուսանողների միջազգային ֆեդերացիա», «Բժիշկ ուսանողների ասոցացիաների միջազգային ֆեդերացիա», «Բժիշկ ուսանողների եվրոպական ասոցացիա», «Ստոմատոլոգների եվրոպական բժշկական կրթության ասոցիացիա» կազմակերպություններին, ինչպես նաև ներգրավված է եվրոպական և միջազգային կրթական ու գիտական բազմաթիվ ծրագրերում:

22. 2020 թվականին Համալսարանը 2-րդ անգամ անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրում առավելագույնը՝ 6 տարի ժամկետով, իսկ 2023 թվականին՝ «Բուժական գործ» կրթական ծրագիրը ստացել է միջազգային հավատարմագրում՝ առավելագույն՝ 7 տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Համալսարանի ռազմավարության նպատակներն ու խնդիրներն են.

ՆՊԱՏԱԿ 1

Ձևավորել արդյունավետ և թափանցիկ կառավարման մոդել՝ իրականացնելով Համալսարանի կառավարման համակարգի շարունակական բարեփոխումներ, ապահովելով ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքեր՝ միտված բժշկական կրթագիտական հայեցակարգի արդիականացմանը, հեռանկարային զարգացմանը և գործընթացների թափանցիկությանը:

Խնդիրները.

1) մշակել և ներդնել Համալսարանի ռազմավարական ծրագրի արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգ, և այն հիմք ընդունել Համալսարանի տարեկան գործունեության արդյունքների վերլուծության ու հաշվետվության համար.

2) մշակել Համալսարանի առաքելությունից և խնդիրներից բխող կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողությունների պլանավորման ծրագրեր և դրանց իրականացման մշտադիտարկման հստակ մեխանիզմներ.

3) իրականացնել ներքին կադրային և գործառութային աուդիտ՝ աշխատատեղերի նպատակային և արդյունավետ օգտագործման նպատակով.

4) ապահովել Համալսարանի հոգաբարձուների խորհրդի և կառավարման մյուս մարմինների համագործակցված աշխատանքը.

5) մշակել ռիսկերի կառավարման հայեցակարգ՝ ուղղված տարաբնույթ ռիսկերի նկատմամբ Համալսարանի կայունության ապահովմանը.

6) ակտիվորեն մասնակցել «Ակադեմիական քաղաք»-ի բովանդակային կայացմանը՝ բուհական և հետազոտական համակարգերի խոշորացման վերաբերյալ մասնագիտական հայեցակարգային առաջարկությունների մշակմամբ և ներկայացմամբ.

7) իրականացնել համադրելի բուհ(երի) ընտրություն և բենչմարքինգ.

8) ավարտել Համալսարանի իրավական նորմատիվային եռալեզու բազայի բարելավման աշխատանքները.

9) իրականացնել ֆինանսական աղբյուրների դիվերսիֆիկացում (վճարովի ծրագրերի, գիտական ծառայությունների, բարեգործական հիմնադրամների, ապահովագրական գրասենյակների և այլնի միջոցով).

10) մշակել Համալսարանի ռազմավարական զարգացման ֆինանսական կողմնորոշիչ ցուցանիշները՝ ըստ ռազմավարական ծրագրում ներկայացված խնդիրների.

11) Համալսարանի ֆինանսական բյուջեի պլանավորման և վերաբաշխման հիմքում դնել ստորաբաժանումների կարիքների գնահատումը ու կրթական ծրագրերի նպատակների իրականացումը և շարունակականությունն ապահովող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը.

12) նպաստել Համալսարանի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը՝ գիտակրթական, բուժօգնության և սպասարկման ծրագրերի մասնակցության ընդլայնման միջոցով.

13) ապահովել շրջանավարտների, այլ շահառուների և Համալսարանի միջև համագործակցությունը՝ մշակելով կրթական, գիտական, բժշկական, ֆինանսական և այլ բնույթի աջակցությունների շարունակական ռազմավարություն.

14) վերանայել ուսման վարձավճարներն ըստ մասնագիտությունների՝ ելնելով կրթական ծրագրերի իրականացման ինքնարժեքի հաշվարկից և շուկայի պահանջարկի առաջնահերթությունից.

15) ընդլայնել Համալսարանի վճարովի հիմնական ծառայությունների, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության տեսակների ցանկը.

16) մշակել և ներդնել խնայողություններին ուղղված միջոցառումների համալիր.

17) Համալսարանի տարբեր սոցիալական խմբերի համար ստեղծել նոր ծրագրեր՝ նրանց նյութական խրախուսման մեխանիզմների ներդրմամբ՝ արհեստակցական կազմակերպության հետ կոլեկտիվ պայմանագրի շրջանակներում.

18) իրականացնել Համալսարանի մասին տեղեկատվության տարածման և թափանցիկության քաղաքականություն և հաշվետվողականություն՝ բարելավելով դրանց մեխանիզմները:

ՆՊԱՏԱԿ 2

Կրթական ծրագրերի և կրթության իրականացման ձևերի շարունակական բարեփոխումների միջոցով ապահովել բարձրորակ, կիրառական և միջազգային չափանիշներին համապատասխան կրթություն

Խնդիրները

1) իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումներ՝ այն համապատասխանեցնելով ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային և մասնագիտական շրջանակների (ՀՀ ՈԱՇ, ՈՄՇ) պահանջներին, շնորհվող որակավորումների ակնկալվող արդյունքներին, միջազգային առարկայական հենանիշներին, բարձրագույն կրթության որակի արժևորման եվրոպական ընկերակցության (ENQA) չափանիշներին և աշխատաշուկայի արդի պահանջներին.

2) հիմք ընդունելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը, Համալսարանում իրականացրած տարաբնույթ ուսումնասիրությունները և միջազգային փորձագետների հետ իրականացվող աշխատանքի արդյունքները՝ հիմնավորել և իրականացնել նախա և հետավարտական կրթական ծրագրերի ու դրանց իրականացման ձևերի բարեփոխումներ՝ հիմքում դնելով բազմադիսցիպլինար թեմատիկ ուսուցումը, առարկաների ուղղահայաց, հորիզոնական սպիրալաձև ինտեգրացիան և հմտությունների ուսումնառության վերջնարդյունքները.

3) ապահովել ուսուցման գործընթացում տարբեր մոդուլներում հետազոտական բաղադրիչի ներդրման և բարելավման շարունակականությունը.

4) բարելավել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը՝ օգտագործելով գնահատման բազմաբաղադրիչ մոտեցումը և ժամանակակից այլ ձևաչափերի կիրառումը.

5) շարունակել կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ գործատուների կարծիքների հաշվառման գործընթացը՝ ծրագրերի շարունակական վերանայման, արդիականացման և որակի ապահովման նպատակով.

6) իրականացնել նախա և հետավարտական ու շարունակական զարգացման բոլոր կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրում.

7) մշակել և ներդնել հանրային առողջության կարիքներից բխող նոր մասնագիտական ծրագրեր

8) բարելավել ուսանողների և դասախոսների շարժունությունը՝ տարածաշրջանի և եվրոպական բարձրագույն կրթական տարածքի բուհերի հետ համագործակցային մշակման և իրականացման միջոցով.

9) մշակել և իրականացնել ուսումնական պրակտիկաների բարելավմանն ուղղված միջոցառումների համալիր ծրագիր.

10) բարձրացնել դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և շրջանավարտների շրջանում առցանց եղանակով և ֆոկուս-խմբերով իրականացվող հարցումների շարունակականությունը և արդյունավետությունը.

11) ձևավորել անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման, ներդրման և շարունակական բարելավման համար.

12) բարձրացնել Համալսարանի և բոլոր կրթական ծրագրերի կայունությունը, կանխատեսելիությունը և հասանելիությունը՝ նոր տեխնոլոգիաների, հարթակների մշակման և ներդրման միջոցով.

13) մշակել օտար լեզուների ուսուցման նոր հայեցակարգ և մեթոդաբանական հիմք՝ ուղղված ուսանողական ողջ համակազմի՝ օտար լեզվի իմացական մակարդակի բարձրացմանը:

ՆՊԱՏԱԿ 3

Զարգացնել Համալսարանի ընդունելությունն ապահովող մարքեթինգային գործընթացները և ապահովել ուսանողների համար կրթական անհրաժեշտ միջավայր՝ նպաստելով նրանց կրթական գործընթացի և սոցիալական կարգավիճակի բարելավմանը:

Խնդիրները

1) պլանավորել ուսանողների ամենամյա ընդունելությունն ըստ մասնագիտությունների՝ հիմքում դնելով տվյալ մասնագիտության արտաքին և ներքին պահանջարկի վերլուծությունը և Համալսարանի թողունակությունը.

2) ակտիվացնել դիմորդների (այդ թվում օտարերկրյա ուսանողների շրջանում) մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքները .

3) վերանայել քոլեջի կրթական ծրագրերը՝ նպաստելով նրա շրջանավարտների ներհոսքին դեպի Համալսարան.

4) վերանայել և բարելավել ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականությունը, ընթացակարգերը և գործիքները.

5) ընդլայնել և ակտիվացնել Կարիերայի կենտրոնի գործունեությունը.

6) ընդլայնել ուսանողներին տրամադրվող խորհրդատվական և աջակցության շրջանակները.

7) բարելավել ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ՝ դրանց արդյունքների թափանցիկությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով.

8) շարունակել ընդլայնել սոցիալապես անապահով ուսանողների համալսարանական աջակցության ծրագրերը.

9) պարբերաբար անցկացվող հարցումների միջոցով տեղեկանալ ուսումնական գործընթացի և Համալսարանում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ ուսանողների կարծիքներին և այն դարձնել քննարկման առարկա.

10) բարելավել ուսանողների լայն հատվածին հետազոտական աշխատանքների մեջ ներգրավելու մեխանիզմները.

11) բարելավել «Էլեկտրոնային համալսարան»-ի հնարավորությունները.

12) զարգացնել համակարգչային օպտիկամանրաթելային ներքին լարային և անլար ցանցը՝ մեծացնելով կապուղիների թողունակությունը, արդիականացնել համալսարանական տեղեկատվական համակարգերի սերվերային պարկը.

13) ավարտել ժամանակակից գրադարանի շինարարական աշխատանքները, և ապահովել միջազգային գրականության հասանելիությունը.

14) ապահովել սիմուլյացիոն կենտրոնների՝ ժամանակակից սիմուլյատորներով հագեցվածությունը և կրթական ծրագրերի վերջնարդյունքների թողունակությունը.

15) ուսումնասիրել բժշկական կրթության միջազգային շուկայի զարգացման երկարաժամկետ հեռանկարները, և ձեռնարկել քայլեր՝ միջազգային կրթական շուկայում կայուն տեղ զբաղեցնելու համար:

ՆՊԱՏԱԿ 4

Ապահովել բարձրագույն բժշկական կրթության որակի գլխավոր երաշխավորի՝ մասնագիտական բարձր որակավորմամբ և բարոյական արժեքներով օժտված ակադեմիական անձնակազմի առկայություն:

Խնդիրները

1) իրականացնել ակադեմիական անձնակազմի սերնդափոխության և նորացման փուլային գործընթաց՝ բարելավված մրցակցային սկզբունքների և մասնագիտական որակներին ներկայացվող նոր մշակված պահանջների հաշվառմամբ.

2) վերանայել ըստ տարակարգերի ակադեմիական անձնակազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի մոտեցումները և մշակել նոր նորմեր.

3) բարելավել ակադեմիական անձնակազմի որակավորման գնահատման ընթացակարգը՝ Համալսարանում գործող որակավորման բազմաբաղադրիչ համակարգի չափորոշիչների վերանայման միջոցով.

4) ապահովել ակադեմիական անձնակազի մասնագիտական և մանկավարժական որակի բարձրացման գործընթացները՝ օգտագործելով նաև արտասահմանում աշխատող հայ բժիշկների հնարավորությունները.

5) բարձրացնել ակադեմիական անձնակազմի շարժունությունը՝ միջհամալսարանական նոր պայմանագրերի կնքման միջոցով:

6) մշակել չափորոշիչներ՝ ֆինանսական աջակցություն հատկացնելով ակադեմիական անձնակազմի այն հատվածին, որոնք հնարավորություն ունեն մասնագիտական վերապատրաստում անցնել և (կամ) դասախոսություններ կարդալ արտասահմանում.

7) վերանայել ակադեմիական անձնակազմի վարձատրության բաշխման տարբերակման մեխանիզմները՝ ըստ գործունեության արդյունքի՝ աշխատանքի արդյունավետության և մասնագիտական կատարելագործման բարձրացման նպատակով.

8) բարելավել ակադեմիական երիտասարդ անձնակազմի մանկավարժական, հոգեբանական, մասնագիտական և բարոյագիտական հմտությունները զարգացնող վերապատրաստման ծրագրերը.

9) ընդլայնել Համալսարանի կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի փաթեթը՝ աշխատողների սոցիալական կենսամակարդակի բարելավման նպատակով.

10) բացահայտել ակադեմիական անձնակազմի կարիքները՝ նրանց շրջանում պարբերաբար իրականացվող ուսումնասիրությունների արդյունքում և մշակել դրանց լուծմանն ուղղված միջոցառումների ծրագրեր.

11) բարելավել Համալսարանի անձնակազմի առողջության պահպանման և բուժօգնության ապահովման գործընթացը.

12) ստեղծել աշխատանքի նպաստավոր միջավայր և պայմաններ՝ որակյալ կադրային ներուժի պահպանման, բարելավման և համալրման համար:

ՆՊԱՏԱԿ 5

Ապահովել Համալսարանի գիտահետազոտական ներուժի շարունակական զարգացումը, բարձրացնել գիտահետազոտական աշխատանքների որակը և միջազգային ազդեցությունը:

Խնդիրները

1) լրամշակել Համալսարանի գիտական գործունեության քաղաքականությունը և ռազմավարությունը՝ հիմքում դնելով Համալսարանի 2018-2028/38 գիտության զարգացման հայեցակարգը, վերջին 5 տարիների հետազոտական գործունեության

գնահատումը և Բարձրագույն կրթության և գիտության մասին նոր օրենքի պահանջները.

2) իրականացնել Համալսարանի գիտական բլոկի կառուցվածքային բարեփոխումներ և լրամշակել դրա առանձին բաղադրիչների (գիտակորդինացիոն խորհուրդ, գիտության վարչություն, ուսանողական գիտական ընկերություն) կանոնակարգերը և ընթացակարգերը՝ հիմքում դնելով լրամշակված ռազմավարությունը.

3) բարելավել միջդիսցիպլինար գիտահետազոտական ծրագրերի արդյունավետությունը.

4) բարելավել հետազոտական և ուսումնական գործընթացների կապը՝ փոխկապակցման մեխանիզմների լրամշակման միջոցով.

5) ներդնել գիտաչափական ցուցանիշների վրա հենված աշխատողի և ամբիոնի գիտական անձնագրերը և դրանց հիման վրա գնահատել Համալսարանի ակադեմիական անձնակազմի հետազոտական արդյունավետությունը.

6) լրամշակել ակադեմիական անձնակազմի և հետազոտողների որակավորման գնահատման համակարգում դասախոսի գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման չափորոշիչներն ու գնահատման արդյունքները՝ առաջնորդվելով գիտաչափական օբյեկտիվ ցուցիչներով

7) սպահովել գերազանցության վրա հենված առաջնահերթությունների ֆինանսավորումը.

8) Լրամշակել մրցունակության վրա հիմնված գործիքակազմը, որը կապահովի Համալսարանի բյուջեում հետազոտողների և ակադեմիական անձնակազմի հետազոտական նախաձեռնությունների, գիտական գործուղումների մեկնելու, միջազգային գիտական պարբերականներում գիտական աշխատանքների արդյունքները հրապարակելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ավելացումը.

9) սպահովել համալսարանական հիմնական գերակա գիտական ուղղությունների նյութատեխնիկական բազայի զարգացումը՝ վերանորոգելով և վերազինելով առկա լաբորատոր-տեխնիկական բազան՝ հասնելով նոր, գերազանցության վրա հիմնված գիտական կենտրոնի կառուցմանը.

10) խթանել գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը՝ օտարերկրյա առաջատար համալսարանների և գիտական կենտրոնների հետ համատեղ նախագծերի նախաձեռնման, երկկողմանի պայմանագրերի կնքման և կոնսորցիումների միջոցով.

11) բարելավել և ապահովել 3-րդ մակարդակի կրթության համար նպաստավոր միջավայր՝ որպես կարևոր պայման ընդունելով հետազոտությունների միջոցով նոր գիտելիքների ստեղծումը.

12) խթանել գիտահետազոտական և գիտակրթական ծրագրերում ուսանողների ակտիվ մասնակցությունը՝ հիմքում դնելով ընդունելով հետազոտությունների միջոցով նոր գիտելիքների ստացումը:

ՆՊԱՏԱԿ 6

Ամրապնդել Համալսարանի միջազգային դիրքը և ընդլայնել տարաբնույթ փոխանակային գործընթացները:

Խնդիրները

1) ընդլայնել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա առաջատար բուհերի հետ համագործակցության առկա փորձը երկկողմ (բազմակողմ) պայմանագրերի, համատեղ ֆինանսավորմամբ նախագծերի և բարձրագույն բժշկական ուսումնական հաստատությունների հետ կազմած կոնսորցիումների շրջանակներում.

2) նպաստել ուսանողների, կլինիկական օրդինատորների (ռեզիդենտների) և ակադեմիական միջբուհական ակադեմիական տեղաշարժին, զարգացնել ուսումնառության արդյունքների փոխճանաչման գործընթացը և նպաստել կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրումներին.

3) ապահովել Համալսարանի մասնակցությունը եվրոպական համալսարանների ընկերակցության, տեղական, միջազգային միջբուհական և այլ կազմակերպությունների ցանցերի ծրագրերին.

4) ապահովել բժշկագիտության տարբեր բնագավառների արտասահմանյան առաջատար բուհերի և կլինիկաների մասնագետների՝ Համալսարանում

դասախոսություններ կարդալու, կառավարման փորձի փոխանակման, ինչպես նաև կլինիկական գործունեության փորձի փոխանակման և նոր մեթոդների ներդրման գործընթացները.

5) Համալսարանի կայքում ընդլայնել միջազգային փոխանակային ծրագրերի մասին տեղեկատվական դաշտը, լրատվությունը դարձնել բոլորի համար մատչելի և թափանցիկ, պարբերաբար ներկայացնել ծրագրերի գործընթացների մասին ամբողջական ինֆորմացիա:

ՆՊԱՏԱԿ 7

Բարելավել Համալսարանի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան՝ հիմքում դնելով ուսումնական ծրագրերի, գիտական առաջնահերթությունների և կլինիկական ծառայությունների որակի ապահովման պահանջները:

Խնդիրները

1) իրականացնել բոլոր մասնաշենքերի տեխնիկական փորձաքննություն և կազմել կառուցման, վերանորոգման և վերակառուցման փուլային ծրագրեր.

2) կատարելագործել «Էլեկտրոնային համալսարան» ծրագիրը՝ ներգրավելով գործընթացների ապահովման լայն շրջանակ.

3) շարունակել ուսանողական հանրակացարանների և ուսումնաարտադրական բազաների բարեկարգումը և ձեռք բերել (կառուցել) նոր ուսանողական կացարան.

4) ավելացնել 3 սիմուլյացիոն կենտրոնների թողունակությունը և բարելավել դրանց հագեցվածությունը.

5) նորացնել Համալսարանի անվտանգության համակարգը.

6) մշակել Համալսարանի աշխատողներին և ուսանողներին տրամադրվող ռեսուրսների արդյունավետության գնահատման մեխանիզմներ և իրականացնել այդ ուղղությամբ հարցումներ.

7) վերանորոգել և արդիականացնել սպորտային դահլիճները.

8) մշակել և ներդնել գրադարանի զարգացման հայեցակարգ.

9) իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման և նոր ուսումնական տարածքների կառուցման աշխատանքներ՝ ապահովելով հենաշարժական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ:

ՆՊԱՏԱԿ 8

Զարգացնել հասարակության հետ կապերը, բարձրացնել հանրային պատասխանատվությունը և բարելավել համապատասխան ծառայությունների համակարգը:

Խնդիրները

1) լրամշակել Համալսարանի հանրային կապերի հայեցակարգը.

2) վերանայել պետությանը և հասարակությանը Համալսարանի հաշվետվողականության ձևաչափերը և ընթացակարգերը.

3) ապահովել ինտերնետային պորտալի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադիրչները.

4) մշակել մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բարելավել գովազդային գործառույթները.

5) ուսումնասիրել լրացուցիչ կրթության հանրային պահանջարկը, մշակել լրացուցիչ կրթության հայեցակարգ՝ ապահովելով համալսարանական համապատասխան ծրագրերի մրցունակությունը և բարձրացնել լրացուցիչ կրթական ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը.

6) ընդլայնել հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմները և բարելավել մշտադիտարկման համակարգի աշխատանքը.

7) բարձրացնել համալսարանական կայքի դերը որպես համակողմանի տեղեկատվական գործիք.

8) ստորաբաժանումների տեղեկատվական պատասխանատուների միջոցով ներքին և արտաքին շահակիցների հետ բարելավել հետադարձ կապը.

9) ընդլայնել հաղորդակցման հնարավորությունները Համալսարանի տարածքում.

10) մշակել Համալսարանի գործունեությունը լուսաբանող տեղեկատվական փաթեթներ և ապահովել դրանց մշտական թարմացումը

ՆՊԱՏԱԿ 9

Ապահովել համալսարանական կլինիկաների առաջընթացը՝ նպաստելով դրանցում կրթական գործընթացի իրականացման բարելավմանը և հանրության առողջության պահպանմանն ու ամրապնդմանը:

Խնդիրները

1) մշակել համալսարանական կլինիկաներում ուսումնական գործընթացի կազմակերպման օրինակելի մոդել՝ կլինիկական կրթական նորարարական գործիքների մշակման, ներդրման և լսարանային ֆոնդի ավելացման հիմքով.

2) բարելավել մատուցված բժշկական ծառայությունների որակը և պացիենտների գոհունակության մակարդակը.

3) ապահովել համալսարանական կլինիկաների բարձր արդյունավետությունը՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման, անձնակազմի շարունակական կրթության ապահովման և աշխատանքային պայմանների բարելավման միջոցով

4) ապահովել ժամանակակից բժշկական սարքավորումների ձեռքբերման, ախտորոշման, բուժման, բժշկական օգնության և սպասարկման նոր մեթոդների ներդրման և կիրառման շարունակական գործընթացը.

5) ստեղծել պացիենտների համար հարմարավետ և անվտանգ միջավայր.

6) ապահովել պացիենտների անձնական տվյալների պաշտպանությունը՝ օրենսդրության պահանջների խիստ պահպանմամբ.

7) իրականացնել համալսարանական կլինիկաների միջազգային հավատարմագրումը.

8) ապահովել այլ կլինիկաների հետ փոխշահավետ համագործակցությունը և երկարաժամկետ հարաբերությունների ձևավորումը.

9) մշակել և (կամ) բարելավել ժամանակակից բժշկագիտության և միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան կլինիկական ուղեցույցներ, գործելակարգեր, ախտորոշման և բուժման չափորոշիչներ.

10) ապահովել «Հերացի վերլուծական կենտրոն»-ի հանրային իրազեկման ծրագրի ընդլայնումը:

ՆՊԱՏԱԿ 10

Ապահովել Համալսարանի գործունեության բոլոր ոլորտները ներառող գործընթացների խորքային վերլուծության վրա հիմնված որակի ապահովման համակարգ:

Խնդիրները

1) բարելավել կրթության որակի գնահատման և ապահովման ներհամալսարանական համակարգը, այն համապատասխանեցնելով ՀՀ՝ որակի ապահովման ոլորտում մասնագիտացված մարմնի և բարձրագույն կրթության որակի արժևորման եվրոպական ընկերակցության (ENQA) ցուցիչներին.

2) վերանայել և բարելավել կրթական ծրագրերի որակի ապահովման քաղաքականությունը, ընթացակարգերը և գործիքները.

3) ընդլայնել որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը և ապահովել դրա պարբերականությունը.

4) իրականացնել ռազմավարական ծրագրի կատարողականի ամենամյա վերլուծություն՝ համապատասխան ցուցիչների մշակման և ներդրման միջոցով.

5) ապահովել պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում շրջափուլի իրականացումը բոլոր գործընթացների շարունակական մշտադիտարկման միջոցով

6) թարմացնել կրթության որակի մշակույթի զարգացմանը և շահակիցների իրազեկմանն ուղղված որակի գործառույթների և դասընթացների ուղեցույցները.

7) ապահովել բուհի ինքնագնահատման գործընթացի պարբերականությունը և դրա թափանցիկությունը: